

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. ՀՈԿՏԵՄԲ. 21-ԻՆ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Մամուլի գլխաւոր վարչութեան շրջաբերական կարգադրութիւնը՝ հաղորդած Նահանգապետներին, գրաւնական վարչութիւններին եւ առանձին գրաւնիչներին հոկտեմբերի 19-ից:

Հոկտեմբերի 17-ին հրատարակուած ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Հրովարտակով կառավարութեան վրայ պարտաւորութիւն է դրուած ի կատար ածել ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ անշեղ կամքը՝ շնորհել ազգաբնակչութեան անխախտ հիմունքների վրայ դրուած քաղաքացիական խղճի, խօսքի, ժողովների եւ ընկերակցութիւնների ազատութիւն: Այդ եւ Մամուլի Դիւանոր վարչութեան եղած հարցումների առթիւ՝ «թէ ինչ սահմաններում կարող է հէնց այժմեանից իրականանալ ազգաբնակչութեան շնորհած տպագրական խօսքի ազատութիւնը» դիւանոր վարչութիւնը Ներքին գործոց նախարարի հրամանով անհրաժեշտ է համարում տալ Ներքին եւ արտասահմանեան հրատարակութեանց եւ պարբերական մամուլի գրաքննութեան վարչութիւնների եւ գրաքննիչներին, հետեւեալ հրահանգութիւնը. —

Հրովարտակի վերեւ բերած խօսքերը շատ մօտ ապագայում առիթ կլինին գրաքննութեան մասին ներկայումս գոյութիւն ունեցող օրէնքների փոփոխութեան համար նոր օրէնսդրութիւն հրատարակելու: Իսկ մինչ այդ օրէնքի հրատարակութիւնը (ցենզուրական) գրաքննական վարչութեան հիմնարկութեանց եւ գրաքննիչների համար գոյութիւն ունեցող օրէնքները պահպանում են իրենց ամբողջ ոյժը, իսկ գրաքննութեան վերաբերմունքը դէպի մամուլի արտագրութիւնները պէտք է արմատականապէս փոխուի համաձայն նորին Մեծութեան կամքի, որը պարզ եւ որոշ արտայայտուած է հրովարտակի մէջ: Որովհետեւ

ոչ մի պետութեան մէջ գոյութիւն չունի տպագրական խօսքի այնպիսի ազատութիւն, որը սահմանափակուած չը լինի որոշումներով և պատժական օրէնքներով, այդ պատճառով էլ և մեզ մօտ այդ օրէնքները միշտ կը սահմանափակեն մամուլի ազատութիւնը, այդ պատճառով գրաքննական վարչութիւնը ներկայումս պարտաւոր է ղեկավարուել մեր քրէական օրէնսդրութեամբ որը նախատեսնում է այն յանցանքների շարքը, որոնք կարող են տեղի ունենալ մամուլի միջոցաւ։ Ներկայումս արդէն գործադրութեան մէջ 1903 թուի քրէական օրէնսդրութիւնը, այն է 103, 104, 106, 107, 111, 128, 129, 132 և 133 յօդուածները։ Մամուլի միւս յանցանքները նախատեսնուած են պատժական օրէնսդրութեան մէջ։ Այսուհետեւ՝ մինչև առանձին օրէնսդրութեան հրատարակութիւնը՝ ղեկավարուելով այդ օրէնսդրութեան մէջ եղած գրաքննական կանոններով, գրաքննիչները պարտաւոր են համակերպուել այն նոր պայմանների հետ, որոնց մէջ դրուած է մամուլը և անձնական տակտով և օրէնքի վրայ չը հիմնուած պահանջները լիովին վերացնելով, հնարաւորութեան չափ խոյս տալ ամեն տեսակ արդարացի տրտուեցնելից։ Առանց նախնական գրաքննութեան հրատարակուող պարբերական մամուլի մէջ եթէ լոյս տեսնեն այնպիսի յօդուածներ, որոնք իրենց մէջ բովանդակում են յանցագործութեան նշաններ, եթէ այդպիսի յօդուածներ լոյս տեսնեն նաև գրաքննութեան ենթակայ հրատարակութեանց մէջ՝ հակառակ գրաքննութեան արգելքի, կամ առանց նրա թոյլտուութեան, մասնաւոր գրաքննիչներն ու այլ անձինք, որոնք քննում են պարբերական հրատարակութիւնները, բացի համաձայն քրէական դատաւարութեան 1213 յօդուածի Տպագրութեան Գլխաւոր Վարչութեանը հաղորդելուց, պարտաւոր են անմիջապէս տեղեկացնել տեղական դատախազներին, որոնցից և կախուած կլինի յանցաւորների դէմ դատքանալ համաձայն քրէական դատաւարութեան 297 յօդուածի և Կառավարիչ Սենատի 1867 թուին Արսէնևի և

Զվենիգորդսկու գործի վերաբերութեամբ տուած բացատրութեան: Բայց վերոյիշեալներէց Ներքին գործոց Նախարարութիւնը՝ համաձայն հրատարակուած Հրովարտակի՝ անհրաժեշտ վարկաւ վերացնել այն բոլոր շրջաբերական կարգադրութիւնները որոնք հրատարակուած էին գրաքննութեան և մամուլի վերաբերեալ օրէնսդրութեան 140-դ յօդուածի համաձայն:

Համաձայն Բարձրագոյն Հրովարտակի վերոյիշեալ կարգադրութեան վերացուած է Արարատի համար տրուած յատուկ ծրագիրը և նախնական գրաքննութիւնը, որոնք շատ դէպքում որոշ դժուարութիւններ էին ստեղծում բաւարարութիւն տալու ընթերցողներին և ժամանակին հասցնելու համարները, թէ և խմբագրութեանց պատասխանատուութիւնն աւելի է ծանրանում, և բարդում, սակայն Արարատը լինելով կրօնական—եկեղեցական օրգան, յոյս ունի, որ կը ծառայի իւր նպատակին և արձագանք կտայ մեր կեանքի կրօնական, եկեղեցական և գրական ժամանակակից պահանջներին: